«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Երաժշտական պարապմունքների դերը երեխայի խոսքի զարգացման գործում»

Դաստիարակ՝ Հերմինե Հովակիմյան

Մանկապարտեզ՝ «Գլաձոր » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
1. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ . 4
1.1. Նախադպրոցականի խոսքի զարգացումը 4
1.2. Երաժշտական պարապմունքների դերը նախադպրոցականի խոսքի զարգացման մեջ . 5
ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ 10
2.1. Պարապմունքի պլան 10
2.2. Հետազոտության ընթացք 12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Երաժշտությունը միշտ ազնվացրել է մարդուն, մաքրել նրան հոգեպես, ծնել վսեմ զգացումներ, կոչել ինքնաճանաչման և ինքնակատարելագործման:»

Արամ Խաչատրյան

Երեխայի խոսքի զարգացումը նախադպրոցական մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Խոսքի շնորհիվ է տեղի ունենում նախադպրոցականի հոգեկան զարգացումը, սոցիալականցումը, ձևավորվում է նրա ներաշխարհը: Նախադպրոցական տարիքում խոսքի զարգացման խնդիրներից առանձնահատուկ կարևորվում են կապակցված խոսքի ձևավորումն ու զարգացումը, քանի որ կապակցված խոսքի միջոցով է իրականացվում լեզվի և խոսքի հիմնական՝ հաղորդակցման գործառույթը: Կապակցված խոսքը մտավոր գործունեության բարձրագույն ձևն է, այն որոշում է երեխայի խոսքային և մտավոր զարգացման մակարդակը: Կյանքի առաջընթացը նոր պահանջներ է դնում երաժշտական դաստիարակության առջև: Մշակվում են նոր սկզբունքներ, ծրագրեր, մեթոդներ, որոնցով երաժշտական դաստիարակությունը նոր բովանդակություն է ստանում: Նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի զարգացման գործում մեծ է երաժշտական պարապմունքների դերը: Երաժշտական մշակույթի ձևավորման համար կարևոր տեղ են գրավում երգերը, խաղերգերը, երաժշտական խաղերը, պարերգերը:

Հետազոտության նպատակը: **Հետազոտության նպատակն է ուսումնասիրել նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի զարգացման գործում երաժշտական պարապմունքների ունեցած ազդեցությունը: Երեխաների խոսքի զարգացման երաժշտական պարապմունքների ունեցած դերի բացահայտման նպատակով իրականացնել գործնական հետազոտություն:**

Աշխատանքի կառուցվածքը: **Սույն հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, 1 տեսական և 1 գործնական գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:**

1. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1. Նախադպրոցականի խոսքի զարգացումը

Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մեթոդական հիմքերը ներկայացված են Մ.Մ. Կոնինայի, Օ. Ի.Սոլովյովայի, Ե.Ի. Տիխեևայի, Ե.Ա.Ֆլյորինայի աշխատություններում: Գիտական ուսումնասիրությունների մեծ մասն ուղղված է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի զարգացման խնդրին, քանի որ այս տարիքում է տեղի ունենում անցում իրադրային խոսքից ենթատեքստային խոսքին (Ս.Լ. Ռուբինշտեյն, Դ.Բ. Էլկոնին): Ավագ նախադպրոցական տարիքը երեխայի խոսքի բարձր ակտիվության և խոսքի բոլոր կողմերի զարգացման շրջան է (Մ.Մ. Ալեքսեևա, Ա.Ն. Գվոզդև, Մ.Մ. Կոլցովա, Գ.Մ. Լյամինա, Օ.Ս. Ուշակովա, Դ.Բ. Էլկոնին, Վ. Ի. Յադեշկո և ուրիշներ):

Խոսքը մարդու ի ծնե ընդունակությունը չէ. այն ձևավորվում,զարգանում և կատարելագործվում է աստիճանաբար, մարդու զարգացմանը զուգընթաց: Մարդն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում լեզվական հիմնական ընդունակություններ և բառապաշար: Յուրաքանչյուր լեզու ունի իր բառապաշարն ու իր արտասանությունը, որը ձեռք է բերվում և կուտակվում հասարակության զարգացման ընթացքում: Լեզուն, միաժամանակ, յուրաքանչյուր ժողովրդի ազգային գիտակցության արտահայտության ձևն է Խոսքի զարգացման հարցերի գիտական հիմնավորման մեջ մեծ է Ե. Ի. Տիխեևայի աշխատությունների դերը: Նա գտնում էր, որ մայրենի լեզուն ամենամեծ մանկավարժն է, և երեխայի դաստիարակությունը պետք է ընթանա այդ ֆոնի վրա: Նա երեխայի խոսքի զարգացման գործընթացը կապում էր երեխայի անձի զարգացման հետ և գտնում, որ բազմաբնույթ խոսքի կարողությունը հանդիսանում է անձի զարգացման կարևոր և բնութագրական երևույթներից մեկը: Խոսքի զարգացման մեթոդիկայի բնագավառում մեծ է մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ե. Ա. Ֆլյորինայի դերը: Նրա գիտական հետաքրքրությունները վերաբերում

են նախադպրոցական դաստիարակության երկու բնագավառների՝ երեխայի ստեղծագործական մտածողության զարգացում և խոսքի զարգացում:

Ավագ նախադպրոցական տարիքի երեխան, երբ փորձում է ինչ-որ բան պատմել, առաջ է գալիս այդ տարիքին համապատասխան խոսքային կառույց. նա սկզբից օգտագործում է դերանուններ, ապա զգալով իր ասածի անհստակությունը՝ կիրառում է նաև գոյականներ. այն հանդիսանում է երեխայի խոսքի զարգացման գոյականական էտապը: Արդյունքում երեխան տիրապետում է կոնտեքստային խեսքին, ուր բավական շատ է նկարագրվում իրավիճակը: Երեխայի խոսքի յուրահատուկ տեսակ է բացատրական խոսքը: Ավագ նախադպրոցական շրջանում հաճախ պահանջ է առաջանում բացատրել իր հասակակիցներին խաղի կանոնները. այս ժամանակ առաջ է գալիս բացատրական խոսքը, որը երեխայից պահանջում է մտքի հաջորդական շարադրում, իրավիճակի հիմնական կապերի և հարաբերությունների առանձնացում: Շարունակում են կատարելագործվել երեխայի խոսքի բոլոր կողմերը: Ավագ նախադպրոցական տարիքում երեխան խոսքի զարգացման այնպիսի մակարդակի է հասնում, երբ լեզուն, խոսքը դառնում են ոչ միայն հաղորդակցման և աշխարհաճանաչման լիարժեք միջոց, այլև գիտակցական աշխարհընկալման առարկա:

1.2. Երաժշտական պարապմունքների դերը նախադպրոցականի խոսքի զարգացման մեջ

Երաժշտական դաստիարակության ծրագրի հիմքը հայկական ազգային երաժշտությունն է: Հատուկ ուշադրություն է դարձվում նաև դասական երաժշտությանը: Երաժշտական դաստիարակության նպատակը և խնդիրները.

1. Հետաքրքրություն և սեր առաջացնել երեխաների մեջ երաժշտության նկատմամբ:
2. Զարգացնել երեխաների երաժշտական ընդունակությունները:
3. Ձևավորել կատարողական պարզ ունակություններ:

4. Հարստացնել երաժշտական տպավորությունները:
5. Ձևավորել պատկերացում երաժշտական տարբեր ժանրերի մասին (երգ, քայլերգ, պար):
6. Զարգացնել ընկալման և կատարման ստեղծագործական ունակությունները:
7. Ծանոթացում ազգային (դուդուկ, զուռնա, թառ, քամանչա, դհոլ, քանոն) և դասական նվագարաններին (դաշնամուր, ջութակ, թավջութակ, ֆլեյտա):
8. Ծանոթացնել հայկական ժողովրդական և ազգագրական երաժշտությանը:

Մանկապարտեզում երաժշտական դաստիարակության ուղղությամբ պետք է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Երաժշտության ունկնդրում – դաստիարակել հետաքրքրություն և հուզական վերաբերմունք տարբեր ժանրի երաժշտության նկատմամբ,
2. Երգեցողություն – զարգացնել երաժշտության ընկալումը, ծանոթ ստեղծագործություններն ըստ նախանվագի կամ մեղեդու հիշելու և տարբերելու կարողությունը, ճիշտ ձայնակազմավորումը, ձայներանգի մաքրությունը: Երեխաները ձեռք են բերում որոշակի պատկերացում երաժշտական հնչյունի բարձրության, տեմբրի, հնչյունի ուժգնության մասին, երգերում և երաժշտական խաղերում ձգտում են կերպարի արտահայտիչ կատարմանը (վերարտադրմանը): Ձայնածավալը՝ դո1 (ռե1) – սի1, դո2:
3. Երաժշտառիթմիկ շարժում, պարեր, խաղեր – ձևավորել երեխաների կատարողական ունակությունները, երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների արտահայտչականությունը, պարերում և երաժշտական խաղերում իմպրովիզացիոն շարժումներ կատարելու կարողությունը:

Նախադպրոցականների ավագ խմբում երեխաների ստեղծագործական ընդունակությունների զարգացման նպատակով կարևորվում է բեմականացնել խաղային երգերը, խաղերի բովանդակության մեջ ներառել կերպարային շարժումների նոր տարբերակներ: Ինչպես նշել է Ն.Ա.Վետլուգինան, ստեղծագործությունն անիմաստ է՝ առանց նախնական երաժշտական տպավորությունների կուտակման և արտահայտիչ շարժումներ կուտակելու հմտությունների յուրացման: Երեխաների մեջ

առաջանում են դրական հույզեր, լավ տրամադրություն, նոր, գեղեցիկ պարային շարժումներ հորինելու և ցուցադրելու ցանկություն, անկաշկանդություն:

Նշենք, որ երաժշտական խաղերը երեխաների երաժշտական ընկալունակության զարգացման կարևոր միջոցներից են: Երեխաները, երաժշտության ուղեկցությամբ կատարելով տարբեր շարժումներ և խաղային գործողություններ, ավելի լավ են զգում երաժշտական ստեղծագործության բնույթը, բովանդակությունը և կառուցվածքը:

Հայտնի է, որ եթե երաժշտական խաղը համապատասխանում է երեխաների տրամադրությանը և ցանկություններին, առաջացնում է ակտիվություն և հետաքրքրություն: Իսկ դա էլ իր հերթին նպաստում է ուսուցվող նյութի արագ ընկալմանն ու հետագա խորացմանը:

Սկզբնական շրջանում ամենամեծ ուշադրությունը պետք է դարձնել մանկան արտասանությանը: Արտասանության նախնական ձևը բացականչությունն է: Մանկան ծանոթ ձայներին և բացականչություններին կարելի է ավելացնել նորերը՝ առաջնորդվելով ուսուցման հնարամիտ ձևերով: Այսպես, պետք է օգտագործել ձայնագրված բնության և կենդանիների ձայներ: Զանազան խաղերի միջոցով պետք է անել այնպես, որ երեխան անդրադարձնի այդ ձայները: Օրինակ՝ ծիտը ծլվլում, ծվծվում, ճտվտում է, ձայնն է՝ «ծիվ-ծիվ»: Երեխան ծիտիկի դերն է տանում և «լուսաբացին» ծվծվում է՝ ծիվ-ծիվ:

Նայած երեխայի տարիքին՝ արտասանությունը ավելի ճոխանում է: Արտասանությունից երգերին անցնելիս էլ պիտի ընտրել այնպիսի երգեր, որ անցումը շատ կտրուկ չլինի: Այդ պատճառով էլ մանկանը նոր ավանդվող երգերի վերաբերյալ Կոմիտասը գրում է. «.... Եղանակները պետք է կազմվեն առոգանության օրենքներին խիստ հնազանդելով...» , այնպես որ երեխան ճանաչի եղանակի հիմնաձայնը, շեշտը, վերջակետը: Այսինքն՝ երեխան պիտի չզգա, թե ինչպես հանկարծ արտասանությունը վերածվեց երգի: Սա է երգել սովորելու բնական և ճիշտ ճանապարհը:

Պարը, խաղը, ասմունքը, երգն ու մարզանքը պետք է դիտել երգ-երաժշտության դասավանդման համազոր ու հավասար միավորներ: Երգը պետք է կարճ, կտրուկ, հստակ, գեղեցիկ, ճոխ հանգավոր, պարզչափով ու կշռով լինի:

Կարևոր է նաև օրը սկսել երաժշտությամբ, հատկապես առավոտյան մարմնամարզության ժամանակ: Նվագով մարմնամարզության շարժումները ընտրելիս պետք է ուղեցույց ունենալ հայկական պարերի շարժումների բնավորությունը, որ դիպուկ բնութագրել է Կոմիտասը. «Վստահ, ազատ, միամիտ, քնքուշ, նուրբ, վեհ, եռանդուն, լուրջ, համեստ, վայելուչ: Հայ գեղջուկ պարը կիրք զարթնեցնող շարժումներ չունի և զգացմունքներն արտահայտում է ոչ թե մեղկ, մոլի, կատաղի, հրապուրիչ և այլ շարժումներով, այլ պարերգերի միջոցով… Ազգի մը քաղաքակրթությունն է կապված իր պարին շարժումներու զարգացումը: Ուրեմն պարը նույնպես մարմնամարզություն է և ամենակատարյալ ոգեղեն մարմնամարզությունը…»:

Երաժշտական պարապմունքները ավելի արդյունավետ կլինեն, եթե մանկապարտեզում ստեղծվի հատուկ ձևավորված երաժշտական սենյակ: Սենյակում լինեն զանազան տիպի նվագարաններ, որոն կարող են լինել տարբեր չափերի և տիպերի:

Թմբուկներ՝

— շրջանաձև միակողմանի թմբուկ-դափ կամ ղավալ, — ծնծղաշար թմբուկ,

— անոթաձև միակողմանի թմբուկ,— գլանաձև և թաղանթ թմբուկ,— թմբուկ կոպալով, այլ աղմկային նվագարաններ՝— կարկաչա— չխչխկան— ճռիկ և այլն,

ղողանջող նվագարաններ՝

— ծնծղա, — քշոց, — կոչնակ, — զանգակներ, — զանգ և այլն,

Փողայիններ՝

— շվի, — պարկապզուկ, — թռչնաձև շվիկ, — պկու, — պզուկ և այլն,

Լարային կսմիթավորներ՝

— տավիղ, — քնար, — փանդուր, — ջնար, — չյոնգուր, — սազ, — վին, — քանոն,

— թառ,

Լարային աղեղնային՝

— ջութակ, — քյամանչա, — քեմանի և այլն,

Լարային հարվածայիններ՝

— թամբուր, — սանթուր,— դաշնամուր և այլն:

Երեխաներին այդ երաժշտական սենյակում պետք է ազատություն տալ: Նվագարանների թիվն անհրաժեշտության դեպքում կարելի ավելացնել: Դաստիարակները չպետք է բողոքեն այն աղմուկից, որը դուր է գալիս երեխաներին: Իսկ երաժշտության սենյակը պետք է այնպես կառուցվի, որպեսզի ձայնը հնարավորին չափ սենյակից դուրս ուժգին չթափանցի (նման միջոցներ կան):

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

2.1. Պարապմունքի պլան

Հետազոտության գործնական մասի իրականացման համար իմ կողմից նախապես մշակվել է պարապմունքի պլանը: Իրականացվել է «Երաժշտական գործիքներ» թեմայի ուսուցումը:

Աղյուսակ 1. Պարապմունքի պլան

Պարապմունք	Խումբ	Թեմա	Տևողություն
Բաց դաս	Ավագ	«Երաժշտական գործիքներ»	25-30 րոպե
Նպատակ	Սաների մեջ ձևավորել հետաքրքրություն երաժշտության տարբեր ժանրերի նկատմամբ, զարգացնել երաժշտության ընկալումը, հաղորդակից դարձնել ազգային (հայկական ժողովրդական և ազգագրական երաժշտությանը) երաժշտական մշակույթին, ծանոթացնել ազգային երաժշտական գործիքներին:		
Թեմային վերաբերող նյութերի հավաքում	Նյութեր- դիդակտիկ նյութերը (երաժշտական գործիքների պաստառներ, ուսուցողական քարտեր, փոքր գնդակներ, երաժշտական գործիքներ այլն): Թեմային վերաբերվող գրականության և բաց դասի անցկացման մեթոդաբանության ուսումնասիրություն:		
Մեթոդներ	Խմբային աշխատանքներ		
Ընթացքը			
Խթանման փուլ	Երեխաները բաժանվում են խմբի, դաստիարակը երեխաներին է բաժանում երաժշտական գործիքների պատկերներով քարտերը, հարցեր է ուղղում սաներին, որից հետո շրջում խմբերով և լսում նրանց պատասխանները:		
Իմաստի ընկալման փուլ	Դաստիարակը միացնում է երաժշտություն և խմբերին հարցնում թե ո՞ր երաժշտական գործիքի մեղեդին էր: Յուրաքանչյուր խմբից մեկը		

	պատասխանում, վերջում ամփոփում են, թե որ խումբն ամենաշատ պատասխանները գտավ: Երգում են Կոմիտասի «Կաքավիկ»-ը:
Երաժշտառիթմիկ վարժություն	Դաստիարակը միացնում է երաժշտությունը, երաժշտությանը համապատասխան երեխաները գնդակը մեկ ոտքից մյուս ոտքը տեղափոխելիս կատարում են ցատկ և ծափ են տալիս:
Կշռադատման փուլ	Այս փուլում հայտնի երեխաները ուսումնասիրում են կոմպոզիտորներին, նկարներին նայելով փորձում հասկանալ ում են ճանաչում, հարցերի միջոցով ստուգվում են նրանց ունեցած գիտելիքները: Թեմայի ամփոփում, ամբողջական ընկալման նպատակով դաստիարակի կողմից յուրաքանչյուր խմբին տրվում է հարցեր:
Հարցեր	ի՞նչ երաժշտական գործիքներ գիտեք, տանն ի՞նչ երաժշտական գործիքներ ունեք, ինչպի՞սի երաժշտություն եք սիրում լսել, Ի՞նչ ստեղծագործություններ գիտեք հայ կոմպոզիտորներից, Ո՞ր երաժշտական գործիքին կցանկանայիք տիրապետել, ինչու՞:

2.2. Հետազոտության ընթացք

Հետազոտական աշխատանքիս գործնական մասի համար «Գլաձոր» ՀՈԱԿ-ի ավագ խմբում՝ իրականացրել եմ բաց դաս «Երաժշտական գործիքներ» թեմայով: Հետազոտությանը մասնակցել է 16 սան՝ 4 աղջիկ, 12 տղա:

Հետազոտության նպատակն է՝ երեխաների մեջ ձևավորել հետաքրքրություն երաժշտության տարբեր ժանրերի նկատմամբ, զարգացնել երաժշտության ընկալումը, ձևավորել կատարողական ունակություններ, նպաստել ռիթմի ընկալմանը և երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների դրսևորմանը պարերում, երաժշտական խաղերում և այլ իմպրովիզացիոն իրավիճակներում: Երաժշտական դաստիարակությունը նպատակ ունի երեխաներին հաղորդակից դարձնել ազգային (հայկական ժողովրդական և ազգագրական երաժշտությանը) և համամարդկային երաժշտական մշակույթին, ինչպես նաև ծանոթացնել ազգային երաժշտական գործիքներին (դուդուկ, զուռնա, թառ, քամանչա, դհոլ, քանոն և այլն):

Առաջին փուլ- առաջին փուլում մշակել եմ բաց դասի անցկացման համար նախատեսված պլանը, նախապես պատրաստել եմ ուսուցողական քարտեր՝ երաժշտական գործիքների նկարներով: Նախապատրաստել եմ հայ մեծանուն կոմպոզիտորների նկարները, որոնք փակցրել եմ գրատախտակին, բաց դասի ընթացքում երեխաներին հավելյալ գիտելիքների տրամադրման և ամրապնդման նպատակով:

Երկրորդ փուլ- երկրորդ փուլում ուսումնասիրել եմ թեմայի վերաբերյալ գրականություն, մշակել այն տեղեկատվությունը, որը պետք է փոխանցեմ սաներին, կազմել եմ պարապմունքի պլանը:

Մանրամասն ներկայացնեմ պարապմունքի ընթացքը, որն իրականացրել եմ ԽԻԿ համակարգով:

Խթանման փուլ: Երեխաներին բաժանում եմ 4 խմբի՝ յուրաքանչյուր խմբում 4 սան: Նախապես իմ կողմից պատրաստված երաժշտական գործիքների

խաղաքարտերը բաժանում եմ նրանց, հրահանգում, որ լավ ուսումնասիրեն դրանք, որից հետո, հերթով մոտենալով խմբերին հարցնում.

- ի՞նչ երաժշտական գործիքներ գիտեն,
- տանն ի՞նչ երաժշտական գործիքներ ունեն,
- ինչպի՞սի երաժշտություն են սիրում լսել:

Երեխաների պատասխանները տարբեր էին, նրանք բավականին ակտիվ էին, պատասխաններին էին՝ դհոլ, դուդուկ, շվի և այլն: Պատասխանները լսելուց հետո ներկայացնում եմ երաժշտական գործիքները, պատմում շվիի մասին, նշում եմ, որ անվանումը ծագում է «շվվոց» բառի արմատից: Շվին հնագույն հայկական նվագարաններից մեկն է և հայտնի է անհիշելի ժամանակներից: Ներկայացնում եմ, որ շվիի համար ամենահայտնի գրված ստեղծագործությունը Խաչատուր Ավետիսյանի շվիի համար կոնցերտն է:

Պատմում եմ նաև դուդուկի մասին, հիշատակելով, որ աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը գրել է. «Դուդուկը միակ գործիքն է, որի նվագն ինձ ստիպում է լաց լինել»: Սաներին ներկայացնում եմ դուդուկի պատմությունը, նշում, որ դուդուկը գործածվում է մ.թ.ա. 1200 թ-ից, հայկական դուդուկի պատմությունը հասնում է մինչև հայկական արքայից արքա Տիգրան Մեծի ժամանակները: Այնուհետև հերթով ներկայացնում մյուս երաժշտական գործիքները:

Իմաստի ընկալման փուլ: Քանի որ այս փուլի նպատակն է ամրապնդել ստացված գիտելիքները, միացնում եմ երաժշտություն և խմբերին հարցնում թե ո՞ր երաժշտական գործիքի մեղեդին էր: Յուրաքանչյուր խմբից մեկը պատասխանում, վերջում ամփոփում ենք, թե որ խումբն ամենաշատ պատասխանները գտավ: Հաջորդիվ երգում ենք. Կոմիտասի «Կաքավիկ»-ը:

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թըռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն:
Սիրունի՛կ, սիրունի՛կ,

Սիրունիկ, նախշուն կաքավիկ:. . .

Այս փուլից հետո երաժշտառիթմիկ դադար ենք տալիս: Միացնում եմ երաժշտությունը, երաժշտությանը համապատասխան երեխաները գնդակը մեկ ոտքից մյուս ոտքը տեղափոխելիս կատարում են ցատկ և ծափ են տալիս:

Կշռադատման փուլ: Այստեղ հիմնական նպատակն այն է, որ երաժշտական գործիքների վերաբերյալ ստացած տեղեկատվությունը երեխաները կարողանան արտահայտել իրենց բառերով և հետագայում օգտագործել: Այս փուլում երեխաների հետ ուսումնասիրում ենք հայտնի կոմպոզիտորներին, նկարներին նայելով փորձում հասկանալ ում ենք ճանաչում, հարցերի միջոցով ստուգում ենք նրանց ունեցած գիտելիքները: Վերջում ուղղում եմ հետևյալ հարցերը.

- Ո՞ր երաժշտական գործիքները սովորեցինք այսօր,
- Կկարողանա՞ք ունկնդրելով երաժշտությունը հասկանալ, թե որ երաժշտական գործիքն է օգտագործվում,
- Իսկ դուք ու՞մ ճանաչեցիք,
- Ի՞նչ ստեղծագործություններ գիտեք հայ կոմպոզիտորներից,
- Ո՞ր երաժշտական գործիքին կցանկանայիք տիրապետել, ինչու՞:

Այս հարցերի միջոցով ոչ միայն զարգացնում ենք երեխայի՝ երաժշտական գիտելիքները, այլ նաև նրա խոսքը, սովորում են խոսել գեղեցիկ և գրագետ, օգտագործելով համապատասխան անունները:

Հավելենք, որ բաց դասին ներկա էին նաև տնօրենը և մեթոդիստը: Տնօրենը կարևորելով երաժշտական պարապմունքների դերը, նշեց, որ մասնագետի կողմից շատ ճիշտ էր շեշտադրված՝ ազգային երաժշտական գործիքների ուսուցման կարևորությունը, քանի որ վաղ տարիքից է պետք երեխաների մոտ սերմանել սեփական, ազգային գաղափարը: Մեթոդիստի կողմից նշվեց, որ մասնագետին հաջողվել է հասնել իր կողմից նախապես սահմանված նպատակներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով, նշեմ, որ մանկապարտեզում երաժշտական պարապմունքների դերը մեծ է երեխայի խոսքի զարգացման մեջ: Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին: Հայոց մեջ երաժշտական կրթության ամենամեծ գիտակն ու ուսուցիչը Կոմիտասն է, որից սովորելը իրենց առաջնային պարտքն են համարում մեր երաժշտության երախտավորները: Կոմիտասն ասել է. «*Ամբողջ մտատանջությունս է հասցնել աշակերտներ, որոնք դպրոցներու մեջ տեղ գրավեն, նվիրվեն ազգային երաժշտության ուսումնասիրության, տարածեն ժողովրդի մեջ հայ երաժշտության ոգին, որպեսզի ժողովրդին մեջ ազգային երաժշտության խոսքը մարմնանա, և անոր ազդեցության տակ ժողովուրդը, թոթափելով իր թույլ պատյանը, մտնե վերակենդանացման շավիղին մեջ: Ինչքան բաղձալի էր ունենալ այս նպատակով առանձին վարժարան, որի միջոցով մեծ արդյունք կարելի կըլլար ձեռք բերել»:*

Այսօր՝ գիտության և տեխնոլոգիայի զարգացման այս դարաշրջանում, երբ ամեն ինչ արագ փոփոխվում է և միաձուլվում իրար,պետք է անել ամեն ինչ, որպեսզի մեր ազգային մշակույթը չկորչի: Իսկ դրա պահպանման համար պետք է երեխաների մեջ սերմանել սեր և նվիրում մեր ազգային մշակույթի, երաժշտության և երաժշտական գործիքների հանդեպ: Երգն ու երաժշտությունը այդ մշակույթի ամբաժանելի մասն են: Պետք է փոքրուց երեխայի մեջ սերմանել սեր մեր ազգային արժեքների նկատմամբ, չէ՞ որ նրանք են մեր վաղվա օրվա մարդիկ: Երեխաները վաղ դպրոցական տարիքից պետք է ճանաչեն մեր կոմպոզիտորներին, նրանց ստեղծագործությունները, անհրաժեշտ է սերմանել սեր դեպի մեր հայկական երաժշտական գործիքները: Երաժշտության ուսուցչի կամ դաստիարակի երգը կամ նվագը պիտի ընտրվի ճաշակով, զուրկ ավելորդություններից, ժողովրդական երաժշտությունը հարկավոր է երգել ու նվագել անպաճույճ ու պարզ, բնական տեսքով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Շահնազարյան Ա. Երաժշտությունը մանկապարտեզում
2. Գրիգորյան Ն., նախադպրոցական մանկավարժություն
3. Козлова С. А., Куликова Т. А. Дошкольная педагогика: Учеб. пособие для студ. сред. пед. учеб. заведений. - 3-е изд., исправ. и доп. - М.: Издательский центр «Академия», 2001. - 416 с.